2026 FEASTS

May 3	Apparition of the Holy Cross
May 14	Ascension
May 24	Pentecost
June 1	Saints Hripsimiank
June 2	Saints Gayaniank
June 6	Saint Gregory the Illuminator's Delivery from the Pit
June 7	Feast of Holy Etchmiadzin
June 20	Discovery of St. Gregory the Illuminator's Relics
June25	Saint Sahag and Saint Mesrob
June 27	King Tirdat, Queen Ashkhen and Khosrovidoukht
July 12	Feast of the Transfiguration
July 18	Saint Thaddeus and Saint Sandoukht
August 16	Assumption of the Holy Mother of God
September 13	Exaltation of the Holy Cross
September 26	Saint Kevork (George)
September 27	Holy Cross of Varak
October 10	Holy Translators
October 25	Discovery of the Cross
October 31	Feast of All Saints
November 7	Holy Archangels Gabriel & Michael
November 28	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 12	Saint Hagop (James) of Nisibis
December 24	Saints David the Prophet & Holy Apostle James
December 26	Saint Stephen the Protomartyr
December 28	Saints Peter and Saint Paul
December 29	The Holy Apostle James & John the Evangelist

ՀԻՒԱՆԴԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ /Visiting the Sick

Անոնք, որոնք հիւանդ հարազատներ կամ բարեկամներ ունին տան կամ հիւանդանոցի մէջ, թող բարեհաճին Տէր Հայրը տեղեակ պահել՝ հեռաձայնելով գրասենեակ (301-229-8742).

Parishioners who have sick relatives at home or at the hospitals to be visited, please notify Der Hayr at the Office, as soon as possible (301-229-8742).

Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

SUNDAY, MAY 3, 2026

ՁԱՅՆ ԳՁ

ԵՐԵՒՈՒՄՆ Ս. ԽԱՉԻ

APPARITON OF THE HOLY CROSS

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ
SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.

Ս. Պատարագ	*Առ. Ժամը 10։30-ին*	*հեռարձակում*
Divine Liturgy	10։30 a.m.	Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

For All Sick *Parishioners*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

- - - - - - (1 . 5 - 10) - - - - - -

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, ընաւ խաւար չկայ անոր մէջ։ Արդ, եթէ ըսենք՝ «հաղորդակից ենք իրեն» եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր։ Իսկ եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ՚ըլլանք իրարու, եւ Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ։

Եթէ ըսենք՝ «մեղք չունինք», մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւն չկայ։ Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն։ Եթէ «մեղք չգործեցինք» ըսենք, ստախօս կը հանենք զԱստուած, եւ մեր մէջ իր խօսքը չկայ։

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

- - - - - - (7 . 14 - 22) - - - - - -

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել։ Հրեաներ կը զարմանային եւ կ՚ըսէին. «Ի՞նչպէս այս մարդը Սուրբ գիրքերը գիտէ, երբ ընաւ չէ ուսած զանոնք»։ Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ՚ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝, որ զիս ղրկեց։ Ով որ կ՚ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ՝ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես իմ հեղինակութեամբս կը խօսիմ։ Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք ղրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ։ Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ո՛չ ոք կը հնազանդի Օրէնքին։ Ինչո՞ւ կ՚ուզէք զիս սպաննել»։ Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ՚ուզէ քեզ սպաննել»։ Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեր էք։ Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով։ Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինծի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով։ Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»։

📖 SCRIPTURE READINGS 📖

I JOHN 1:5-10

This is the message we have heard from him and declare to you: God is light; in him there is no darkness at all. If we claim to have fellowship with him yet walk in the darkness, we lie and do not live by the truth. But if we walk in the light, as he is in the light, we have fellowship with one another, and the blood of Jesus, his Son, purifies us from all sin.

If we claim to be without sin, we deceive ourselves and the truth is not in us. If we confess our sins, he is faithful and just and will forgive us our sins and purify us from all unrighteousness. If we claim we have not sinned, we make him out to be a liar and his word has no place in our lives.

JOHN 7:14-22

Not until halfway through the Feast did Jesus go up to the temple courts and begin to teach. The Jews were amazed and asked, "How did this man get such learning without having studied?"

Jesus answered, "My teaching is not my own. It comes from him who sent me. If anyone chooses to do God's will, he will find out whether my teaching comes from God or whether I speak on my own. He who speaks on his own does so to gain honor for himself, but he who works for the honor of the one who sent him is a man of truth; there is nothing false about him. Has not Moses given you the law? Yet not one of you keeps the law. Why are you trying to kill me?" "You are demon-possessed," the crowd answered. "Who is trying to kill you?"

Jesus said to them, "I did one miracle, and you are all astonished. Yet, because Moses gave you circumcision (though actually it did not come from Moses, but from the patriarchs), you circumcise a child on the Sabbath. Now if a child can be circumcised on the Sabbath so that the law of Moses may not be broken, why are you angry with me for healing the whole man on the Sabbath? Stop judging by mere appearances, and make a right judgment."

ՅԻՆՈՒՆՔ

Յինունք կը կոչուի Զատիկէն մինչեւ Հոգեգալուստ երկարող 50 օրերը, որոնք ամբողջովին Տէրունի տօներ են՝ նուիրուած Քրիստոսի Յարութեան եւ Համբարձումին, իսկ յիսուներորդ օրն ալ՝ Հոգեգալուստին։

Յինունքի իւրաքանչիւր Կիրակին ունի յատուկ անուանում.

1. *Մ. Զատիկ*
2. *Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ*
3. *Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի*
4. *Կարմիր Կիրակի*
5. *Երեւումն Մ. Խաչի*
6. *Վեցերորդ Կիրակի*
7. *Երկրորդ Ծաղկազարդ*
8. *Հոգեգալուստ*

Eastertide

The 50 days from Easter to Pentecost is called Hinoonk (Eastertide), which are all feasts of the Lord, dedicated to the Resurrection and Ascension of Christ, and the fiftieth day to Pentecost.

Each Sunday of Hinoonk has a special name:

1. Easter
2. New Sunday or Second Easter
3. Ashkharhamatran or Green Sunday
4. Red Sunday
5. The Apparition of the Holy Cross
6. Sixth Sunday
7. Second Palm Sunday
8. Pentecost

2025 & 2026 Membership Dues - Parishioners who have not paid their 2025 Annual Membership dues are encouraged to remit payment. 2026 Membership Dues are also accepted now. The membership fees are $150.00 per adult and $50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

ԵՐԵՒՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

APPARITION OF THE HOLY CROSS

Ամէն տարի, Սուրբ Զատկին յաջորդող չորրորդ Կիրակի օրը, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի Երեւման տօնը՝ անգամ մը եւս յիշելով Տիրոջ չարչարանքները, խաչելութիւնը եւ խաչին վրայ անոր թափած անմեղ արեան չնորհիւ մարդկային ցեղին փրկութիւնը։

351 թուականի Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղիմացի հայրապետի օրով, օրուան երրորդ ժամուն (առաւօտեան ժամը 9:00-ին) երկինքի վրայ կ'երեւի Քրիստոսի խաչին նշանը՝ տարածուելով Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռը։ Խաչի այս պայծառ տեսքէն նոյնիսկ կը մթագնի արեգակը։ Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի խորերէն աղօթելու Աստուծոյ եւ գոհութիւն յայտնելու Բարձրեալին՝ որ զիրենք այս մեծ չնորհքին արժանացուցած էր։

The apparition of the Holy Cross occurred in the first year of the incumbency of Patriarch Cyril of Jerusalem. In 351 about 3:00 a.m. on the morning of Pentecost, a massive cross appeared in the sky, extending from the crest of Golgotha to the crest of Mount of Olives. Visible for many hours, it was witnessed by all the people of Jerusalem, who ran to the churches in contrition and piety. The story of this apparition was written by Cyril himself, who send it to the emperor in Constantinople; it is read in our church as a lection. According to Cyril the apparition of the cross was in defense of the orthodox faith against the false doctrine of Arius, who enjoyed Emperor Constantinus' protection. Cyril strove to influence the emperor through sweet and differential words. The Greek Orthodox observe the Feast of the Apparition on May 7, even though in 351 Pentecost fell on May 19. We observe it on the fifth Sunday of Eastertide, 28 days after Easter; the feast is thereby movable within an interval of 35 days, from April 19 to May 23.

Parishioners who wish Der Hayr to visit and bless their home, please call the church office at (301) 229-8742 or email your requests to: soorpkhatch@verizon.net

ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոգեւոր աշխարհի առաջին օրէնքը ՏԱԼ-ն է:

Տուէք բոլոր անոնց, որոնց կը հանդիպիք, կամ որոնց կեանքերը կը դպչին ձեր կեանքին. տուէք ձեր աղօթքներէն, ձեր ժամանակէն, ձեր անձերէն, ձեր սէրէն եւ ձեր մտածումէն: Ապա տուէք այս աշխարհի բարիքներէն եւ դրամէն, որքան որ ձեզի տրուած է :

Տուէ՛ք ու տուէ՛ք ձեր լաւագոյնը բոլոր անոնց, որոնք պէտք ունին:Եղէ՛ք մեծ տուողներ: Տուէ՛ք այնպէս ինչպէս Երկնաւոր Հայրը կուտայ: Ան իր արեւը կը ծագեցնէ չարին ու բարիին վրայ եւ անձրեւ կը ղրկէ արդարին եւ անարդարին վրայ: Յիշեցէ՛ք, որ պէտք է տաք ըստ պէտքին եւ ո՛չ արժանիքին: Միշտ ի մտի ունեցէք իրական կարիք մը զոհացնելու անհրաժեշտութիւնը՝ նմանելու համար մեր Երկնաւոր Հօրը:

Երբ կը ստանաք, տուէ՛ք առանց հարցնելու, առանց սահմանափակելու՝ ճի՛շդ Աստուծոյ պէս: Անոնց ձեզի մօտ ըլլալը, ազգական ըլլալը երբե՛ք հաշուի պէտք չէ առնուի: Միա՛յն իրենց կարիքը ձեզի առաջնորդ պէտք է ըլլայ: Աղօթեցէ՛ք, որ Աստուծոյ մօտ ընդունելի ըլլայ ձեր տուածը:

ABOUT GIVING

The first decree of the spiritual world is GIVING.

Give to everyone you meet, or whose lives you touch. Give your prayers, your time, your selves, your love and your thoughts. Then give the kindness and money of this world, as much as is given to you.

Give and give your best to all who need it. Be great givers. Give as the Heavenly Father gives. He shines the sun on the evil and the good and rains on the just and the unjust. Remember that you should give according to need and not according to merit. Always keep in mind that you should satisfy the real need to be like our Heavenly Father.

When you receive, give without asking, without restriction, just like God. By them being close to you, being relatives should never be taken into consideration. Only their need should be your target. Pray that what you have given is accepted by God.

REGISTER FOR DATEV SUMMER PROGRAM IN PERSON: JUNE 28 – JULY 5, 2026

The Armenian Prelacy has planned an in person session of St, Gregory of Datev Institute Program for youth ages 13-18, scheduled to take place from Sunday, June 28 to Sunday, July 5, 2065, at Shiloh Bible Camp & Retreat Center in Hewitt, New Jersey and will include lectures and engaging discussions on faith related topics.
To register please go to the following link:
https://armenianprelacy.org/programs/datev/
If you have any questions, please contact Dn. Shant by email or by calling:
shant@armenianprelacy.org 212-689-7810

Այս տարի հոգեհանգիստ կարելի չէ կատարել հետեւալ տաղաւար տօներուն.

- *Կիրակի, Յուլիս 12……Այլակերպութիւն Քրիստոսի*
- *Կիրակի, Օգոստոս 16……Սուրբ Աստուածածին*
- *Կիրակի,.Սեպտեմբեր 13……Խաչվերաց*

NO HOKEHANKISD SERVICES ON THESE FEAST SUNDAYS:

July 12……Feast of the Transfiguration
August 16……Assumption of the Holy Mother of God
September 13……Exaltation of the Holy Cross

Հոգևոր մտքեր - Spiritual Thoughts:

Նեղութիւններ ու ցաւեր միշտ պիտի ունենանք, սակայն Աստուած խոստացած է մեզի հետ ըլլալ՝ ամէն պարագաներու մէջ:

We will always have troubles and pains, but God has promised to be with us in all circumstances.